դարձեալ սկիզբն արարին յուզել զինդիր Գողգոթայի, որոյ վասն Տէր Պետրոս և Տէր Վահրամ ասին հանրագիր 'ի դատարանէ Երուսաղէմի ստորագրութեամբ երեւելի այլազգեաց, յորում վկայեն թէ Գողգոթայն է սեփհականութիւն ազգին Հայոց 'ի վաղ ժամանակաց անտի, և է ցարդ 'ի ձեռս նոցա. և ոչ ոք 'ի քրիստոնէից ունի իրաւունս լինիլ ձեռնամուխ 'ի տեղին յայն, և կամ հակառակիլ և վնաս յարուցանել վասն այնր. ՎՁՎ (1395)։

Զհրովարտակս զոր տուեալ են Սուլթանք Եգիպտոսի առ Պատրիարքունս եւ կրօնաւորս Երուսաղէմի եղծեալ և ապականեալ են մեծաւ մասամբ, և բազումք եւս չերեւին 'ի միջի, որպէս գրեցաք։ Ա.Հաւասիկ 1 հրովարտակ տուեալ յանուն Մարտիրոս Եպիսկոպոսի սակս դարձուցանելոյ զԳողգոթայն առ ազգն Հայոց՝ թերի և անթուական։ 2 հրովարտակ, դարձեալ վասն այսր խնդրոյ, որոյ մի մասն միայն մնացեալ է, և ընթերցումն կարի դժուարին, գրեալ 'ի ՀԲ Ըստպիլ էվել ամսոյ ՎՕԹ (1349)։ 3 հրովարտակ՝ յաղագս խնդրոյ Գողգոթայի, առնուլ 'ի ձեռաց Վրաց և տալ Հայոց, գրեալ 'ի Բ Մուհարրէմ ամսոյ ՎՕՁ, (1357), որոյ սկիզբն թերի· այլ մեք կարի զգուշութեամբ փոյթ կալաք գամրողջն դնել 'ի կարգի պատմութեանս։

Ի ժամանակին յորում իշխէին Սուլթանք Եգիպտոսի Ասորեաց և Պաղեստինոյ, և մինչդեռ էր Մէլիք Նասր յԵրուսաղէմ, այրեցաւ մին 'ի մեծամեծ մզկիթացն այլազգեաց 'ի Գահիրէ, զինքեան արկին 'ի վերայ քահանայիցն Գոպտոց, և յարեան Եգիպտացիք 'ի վերայ քրիստոնէից և անխտիր կոտորէին զնոսա ուր և պատահէին, յաղմկիէս յայսմանէ մեծան բազումք 'ի քրիստոնէից յԵգիպտոս և 'ի սահմանս նորա, և էր 'ի մեծի տագնապի և Պատրիարքն Աղէքսանդրիոյ՝ զի խնդրէին և զնա, եւ այլք ահիւ և երկիւղիւ ելանէին 'ի տանց իւրեանց, եւ այս տեւեաց ամս ինչ։ Եւ Սուլթանն եւս քարոզ կարդալ յԵգիպտոս, յԱսորիս և յԵրուսաղէմ, և որք ընդ իշխանութեամբ նորա էին, չ'նըստիլ քրիստոնէից յերիվար և 'ի կիսէշ և չդնել փակեղ 'ի գլուխս ըստ օրինի այլազգեաց (1389)։

Մարտիրոս Եպիսկոպոս եւ միաբանք լեռնակղզման, տաղտկացեալ յերեսաց Արաբացւոց, որք հանապազ պա-